Առարկայական չափորոշիչներին ներկայացվող պահանջների վերանայման անհրաժեշտությունը՝ ատելության խոսքի, արմատականացման եւ այլատյացության կանխարգելմանը նպաստելու դիտանկյունից

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. 29 օգոստոսի - N 1000-Ա/Ք հրամանի ՀԱՎԵԼՎԱԾ N 1-ը վերաբերում է Հայոց լեզու, գրականություն հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչին (1-9-րդ դասարաններ):

Այդ չափարաշիչում արդարացիորեն նշվում է, որ

«թ) Գրականության ուսումնասիրությունը սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստելու է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի ու հանդուրժողականության, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը, զգացականհուզական, գաղափարական և հանրակեցական դաստիարակությանը: »

…….

«ժա) Գրականության ծրագրերով առաջարկվող նյութերը պետք է համապատասխանեն սովորողների տարիքային հոգեբանությանը, արձագանքեն նրանց նախասիրություններին, լինեն գրավիչ, պարունակեն հետաքրքրական և նշանակալից դեպքեր ու իրադարձություններ, մարդկային կրքերի բախումներ՝ բարու հաղթանակով, մարդկանց ճակատագրեր՝ հերոսական կամ դրամատիկ, պայքար հանուն վսեմ գաղափարների, ունենան արդիական հնչողություն, արտացոլեն ինչպես պատմական անցյալը, այնպես էլ այսօրվա բարդ ու բազմակողմանի կյանքը, նպաստեն մարդու և նրա հոգեբանության ճանաչմանը, ունենան կողմնորոշիչ նշանակություն: »

Միեւնույն ժամանակ ընդունվում է, որ

«ժբ) Տեղեկատվության ժամանակակից միջոցների լայն տարածման, տեսալսողական տեխնիկայի, համացանցի, համակարգիչների գործածության, գրական երկերի էկրանավորման պայմաններում խիստ նվազել է ընթերցանության ձգտումը և ընդհանրապես տպագիր աղբյուրներից օգտվելու ավանդույթը: Գրականության դասավանդման կարևոր խնդիրներից է դասարանական և արտադասարանական ընթերցանության նյութերի նպատակադիր ընտրության, բարդ բնագրերի դյուրացման և կարդալու տեխնիկայի կատարելագործման հնարներով սեր արթնացնել դեպի գրավոր խոսքը, խթանել սովորողների ընթերցասիրությունը, քանի որ գիրքը բոլոր դեպքերում մնում է թե՛ գիտելիքների ձեռքբերման ամենահզոր միջոցը, թե՛ գեղագիտական ապրումների անսպառ աղբյուրը:»

Այստեղ պետք է նկատել, որ մատնանշելով «գրավոր խոսքի հանդեպ սեր արթնացնելը» որպես գրականության դասավանդման կարևոր խնդիրներից մեկը՝ դրա լուծման ուղիները նշվում են բացառապես տեխնիկական այնպիսի հնարքներն ինչպիսին են «դասարանական և արտադասարանական ընթերցանության նյութերի նպատակադիր ընտրությունը, բարդ բնագրերի դյուրացումը և կարդալու տեխնիկայի կատարելագործումը»: Որքան էլ որ այս հնարքները կարեւոր լինեն, դրանք ինքնին խիստ անբավարար են աշակերտի մոտ գրքի հանդեպ սեր արթնացնելու համար: Շատ ավելի կարեւոր է, որ ընտրված գրականությունը գրավիչ լինի ընթերցող աշակերտի համար, պատասխաններ տա նրա տարիքի համար արդիական հարցերին: Չէ՞ որ հենց ընտրված եւ աշակերտին հրամցված գրքի բովանդակությունն է, որ նրան պետք է կապի գրքին, ապաեւ՝ գրքերին: Արդյո՞ք ճիշտ գրքեր են ընտրվում աշակերտներին որպես պարտադիր ընթերցանության նյութ: Չէ՞ որ գրքերը նաեւ լավ քաղաքացի եւ լավ մարդ կերտելու ուժ ունեն: «Ասա ինչ գրքեր ես կարդացել երիտասարդ տարիներին՝ ասեմ ով ես դու»:

Թե ինչ որակներ ենք ուզում զարգացնել, աճեցնել ՀՀ քաղաքացի երիտասարդների, պատանիների մոտ քչից-շատից ամրագված է նաեւ դպրոցի առարկայական չափորոշիչներում: Բայց արդյո՞ք գրականությունն ընտրելիս հաշվի են առնված երեխաների մոտ մտածողության, մշակույթների, վերջապես՝ ինքնությունների բազմազանությունը, այդ թվում սեռական ինքնությունը: Արդյո՞ք դպրոցը եւ, ավելի լայն իմաստով՝ պետությունը, պատասխանատվություն չի կրում այն բանի համար, որպեսզի ենթամշակութային, կրոնական, սեռական տարբեր ինքնություններ ունեցող երեխաները ստանան իրենց այդ ինքնություններին չհակասող, հանրայնորեն ընդունելի, լեգիտիմ եւ մշակութային առումով որակյալ վարքի մոդելներ՝ ինտեգրվելով ընդհանուր ազգային-քաղաքացիական գաղափարաբանությանը՝ փոխարեն մարգինալացվելու սեփական երկրում եւ ինքնապահպանման ու ինքնապաշտպանության պարզ բնազդից դրդված փնտրելու հովանավորներ Հայաստանից դուրս՝ տրվելով օտար ազդեցությունների:

Ե. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Ուսումնական գործունեությունը բարդ ու բամակողմանի գործընթաց է, որն արդյունավետ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողի գործուն մասնակցությունը այդ գործընթացին: Սովորողին պետք է դիտել ոչ միայն որպես կրթության և ուսումնառության օբյեկտ, այլև սուբյեկտ և մասնակից, որը պետք է պատասխանատվությամբ վերաբերվի ուսումնական գործընթացին, գիտելիքին հասնելու և դրան տիրապետելու ճանապարհին դրսևորի ինքնուրույնություն, նախաձեռնություն, նախանձախնդրություն, հետազոտելու, ստեղծագործելու կամք և ցանկություն, ճանաչողական գործունեության ընթացքում կուտակած գիտելիքները կիրառի գործնականում, սովորածը և հավաքած տեղեկությունները կարողանա հաղորդել ընկերներին, դրսևորի հաղորդակցական, համագործակցային և հանդուրժողականության որակներ: Կրթության և ուսումնառության տարիներին, անհրաժեշտ գիտելիքներ ստանալուն զուգընթաց, սովորողը պետք է ձեռք բերի ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույնաբար գործելու հմտություններ, կուտակի հետագա կյանքի և աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուստի

Ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ <> բնագավառի ուսումնական գործունեությունը ներառում է հետևյալ բաղադրիչները:

2. Խմբային գործունեություն

Խմբային գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու, հասկանալու, համարժեք և բավարար պատասխան տալու կարողությունը, հանդուրժողականությունը, համագործակցությունը, իր և խմբի անդամների ուսումնառության, աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը:

3.Զույգերով գործունեություն

«Զույգերով գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու, հասկանալու, բավարար պատասխան տալու կարողությունը, հանդուրժողականությունը, համագործակցությունը, իր և ընկերոջ աշխատանքի, ուսումնառության և հաջողության համար պատասխանատվությունը:»

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնում նշված է, որ

«Կարողություններ ու հմտություններ Միջին դպրոցն ավարտողը պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները
Ընկերների հետ քննարկել գրական երկը, բանավիճել երկում զարգացող դեպքերի, հերոսների արարքների շուրջ: Բանավեճի ընթացքում հանդես գալ փաստարկված խոսքով՝ հիմնավորելով տեսակետը: Համագործակցել, դրսևորելով հանդուրժողականություն և հարգանք մյուսների կարծիքների հանդեպ»

4. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

«Միջին դպրոց Միջին դպրոցում մայրենիի, այնուհետև հայոց լեզվի և գրականության դասավանդումը սովորողների մեջ պետք է ձևավորի

*հայոց լեզուն և գրականությունը ճանաչելու, սիրելու, ուսումնասիրելու ձգտում, հայոց լեզվի և գրականության՝ որպես ազգային ինքնության գրավականի գնահատում

*իր նախնիների հոգևոր մշակույթի գնահատում

*գրական երկի ազդեցությամբ ինչպես ինքնաճանաչման, այնպես և դիմացինին հասկանալու, արժևորելու ձգտում, նրբանկատություն, նրբազգացություն, մարդկանց օգնության ձեռք մեկնելու պատրաստակամություն

*համագործակցության կարողություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի տեսակետի նկատմամբ

*անաչառ ինքնագնահատում, սեփական անձի, ինքնության գիտակցում և արժանապատիվ կեցվածք

*ինքնադաստիարակության ձգտում՝ գրական երկում արծարծված հիմնական գաղափարին հաղորդակից լինելու, դրական օրինակներին հետևելու ճանապարհով

*գրական-գեղարվեստական ճաշակ, գեղարվեստական խոսքով հաղորդվող հույզերի և զգացմունքների ընկալում»

Եզրակացություն.

Հայոց լեզու, գրականություն հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչում (1-9-րդ դասարաններ) բացակայում են ատելության խոսքի, այլատյացության եւ արմատականացման կանխարգելմանն ուղղված պահանջները:

Ինքնին հանդուրժողականության ձեւավորման խրախուսման պահանջը տրված է հակասական եւ վտանգավոր, երկիմաստ ընկալման հնարավորությամբ պարուրված:

Հանդուրժողականությունը ինքնին չի կարող դիտարկվել որպես արժեք, քանի որ այն ոչ թե ինքնուրուն սուբյեկտ է, այլ ածանցյալ է սուբյեկտի հանդեպ: Տվյալ դեպքում, օրինակ, հակաօրինական արարքը չի կարող հանդուրժելի լինել, մյուս կողմից, երեխայի մոտ պետք է սերմանվի հանդուրժողականություն իրենից տարբեր ազգային, կրոնական, սեռային եւ սեռական պատկանելություն ունեցողի հանդեպ:

Անգամ լրջագույն հետազոտությունները, ինչպիսիների թվին է պատկանում «Հանդուրժողականության եւ անհանդուրժողականության դրսեւորումները հայ գրականության մեջ» գրքում[1] ժողովվածները, որոնցից մեջբերումներ են արված սույն հետազոտության մեջ, հիմնականում չեն խուսափում այս խնդրից: Նրանում հանդուրժողականություն եզրը ապրիորի համարվում է ինքնին դրական բան: Դա նաեւ իր հետ բերում է մեկ այլ խնդրի. Հասարակության մի ստվար մասի մոտ այս բառը ընկալվում է այն փիլիսոփայական հակասության համատեքստում, ըստ որի կան երեւույթներ, որոնք ինքնին վատն են, բացասական են, անբարոյական են, սակայն քանի որ Հայաստանը մաս է կազմել համաշխարհային իրավական համակարգի, այդ երեւոյթները ստիպված ենք հանդուրժել: Այսինքն դրանք իրենց մեջ պարունակում են չհանդուրժելու պատճառ, սակայն իրավունքի ուժով ստիպված ենք դրանք հանդուրժել:

[1] https://epfarmenia.am/sites/default/files/Document/Tolerance_Intolerance_in_Armenian_Literature_book_2017.pdf

Հայ գրականության դասագրքերում ազգային հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումների վերլուծություն

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ դպրոցներում դասավանդվող հայ գրականություն առարկայի, մասնավորապես՝ 7-12 դասարանների դասագրքերը: Սկզբնական շրջանում ուսումնասիրությունը կատարվել է դասագիրք առ դասագիրք, որոնցից դուրս են բերվել դրական և բացասական ներկայացված կերպարները: Այնուհետև ամբողջական պատկեր ստանալու համար, բոլոր դասագրքերի ուսումնասրությունները և դուրս բերված տեղեկատվությունը վերլուծվել և ամփոփվել է մեկ ամբողջական պատկերի մեջ:

10-12-րդ դասարանների դասագրքերում օտարազգի հեղինակները բացակայում են, ներառված են բացառապես հայ հեղինակներ:

7-12 դասարանների դասագրքերում հայ, հայկական, հայոց, ռուս, թուրք, թուրքական, պարսից, պարսկական և այլ ազգեր հիշատակող բառերի հաճախականությունը դիտարկելիս կարող ենք նկատել, որ հայ, հայկական, հայոց բառերի հանդիպման հաճախականությունն անհամեմատ ավելի մեծ կշիռ ունի՝ 1176, ինչը ընդհանուրի 62.7% է: Աղյուսակում կարող ենք տեսնել նաև, որ հայ, հայոց, հայկական բառերի բնութագրիչներից և դրանց վերագրվող գործողություններից 96-ը դրական բնութագրիչներ են: Մասնավորապես, հային վերագրվում են այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ համաշխարհային փառքի հասած հայ գրող, հայոց մեծեր, հայկական վեհ տաճարներ, հայ գրականությունը աշխարհի հնագույն գրականնություններից է, զարգացած հայ, վեհագույն հայոց արքա, իմաստուն ժողովուրդ, ազատագրական ոգի, անմահ ժողովուրդ, հնագույն ժողովուրդ: Հայ և հայկական բառերի բացասական համատեքստում օգտագործվում են ընդամենը երեք անգամ: Հայը մի անգամ բնութագրվում է իբրև ժլատ, կղերական, հեղինակն անիծում է նաև ուրացող ու դավաճան հային:

Ուսումնասիրության ժամանակ հստակ արտահայտված բացասական դիրքորոշվում է նկատվում թուրքերի նկատմամբ: Ընդհանուր առմամբ թուրքերի և թուրքական-ի մասին հիշատակվում է 98 անգամ, որից 74-ին վերագրված են հստակ արտահայտված բացասական բնութագրիչներ:

Թուրքերի մասին հիշատակվում է, երբ խոսվում է բռնապետության, կոտորածի, զավթելու, թալանելու, հալածանքների ենթարկվելու, գերիշխանության մասին, իսկ թուրքերը բնութագրվում են իբրև նվաճող, նենգ, հայատյաց: Թուրքերը ներկայացվում են իբրև հայերի թշնամի, իբրև զավթող ազգ, որը միշտ փորձել է հայերին իր լծի տակ առնել, ճնշել: Հովի. Շիրազի կենսագրության մեջ նույնպես անդրադարձ է կատարվում թուրքերին հետևյալ բացասական համատեքստում. հորը սպանել են թուրքերը:

Ազգային հանդուրժողականության չափման միավոր է նաև բառերի հաճախականությունը գրականության մեջ: Առանձնացվել են ազգ, ազգային, մենք, մեր, նրանք, նրանց, դուք, ձեր, օտար, օտարազգի, հայրենիք, հայրենասիրություն,

համաշխարհային, համամարդկային բառերը և դիտարկվել վերջիններիս կրկնման հաճախականությունը: Սրանք, ըստ էության, ազգային անհանդուրժողականության ձևավորման անուղղակի տարրեր են: Ազգ և ազգային բառերը հանդիպում են 262 անգամ: Մենք-մեր զույգը 142 անգամ:

Եզրակացություն

Հայ գրականություն առարկայի 7-12 դասարանների դասագրքերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ և նկատել որոշ միտումներ, որոնք առկա են դասագրքերում: Վերջիններիս ուսումնասիրության արդյունքում կարելի է տարանջատել ազգային անհանուրժողականության դրսևորման երկու ձև՝

- ազգային անհանդուրժողականության ուղղակի դրսևորում
- ազգային անհանդուրժողականության անուղղակի դրսևորում

Ազգային անհանդուրժողականության ուղղակի դրսևորում ասելով հասկանում ենք այս կամ այն ազգի կամ նրան վերագրվող որոշակի բնութագրիչների, գործողությունների առկայությունը դասագրքերում:

Վերլուծության արդյունքները թույլ են տալիս տեսնել, որ հայ գրականություն առարկայի դասագրքերում առկա են ազգայինի, հայ ազգի նկատմամբ հստակ դրական վերաբերմունք ձևավորելու միտում: Սա երևում է հայ, հայություն, հայկական, հայոց բառերի կրկնման հաճախականությունից, որը կազմում է բոլոր ազգերի մասին հիշատակումների 62.7%-ը, ինչպես նաև այն հանգամանքից, որում օգտագործվում են հայ, հայկական բառերը, և բնութագրիչներից, որոնք տրվում են հային, հայ ազգին:

Ազգային անհանդուրժողականության անուղղակի դրսևորում ասելով նկատի ունենք այն բառերի և տարրերի առկայությունը և դրանց հանդիպման հաճախականությունը, որոնք ազդում են և անուղղակի կերպով ձևավորում են որոշակի դիրքորոշում սեփական և այլ ազգերի նկատմամբ:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Հայ գրականություն առարկայի դասագրքերում հայը հստակ տարբերակվում է այլ ազգերից, որոնց կարելի է տարանջատել երեք խմբի.

- Թշնամի ազգեր, որոնց շարքին են դասվում թուրքերը, պարսիկները, արաբները: Դասագրքերում կարելի է նկատել այս ազգերին ստորադասելու միտում, նրանք նկարագրվում են իբրև բարբարոս, անկիրթ և վայրագ, որոնք ունակ են միայն զավթելու:
- Չեզոք ազգերի շարքին են դավում ռուսներն ու վրացիները, քանի որ դրական և բացասական միանշանակ դիրքորոշում չկա:

- Օրինակելի ազգեր, որոնց մասին դասագրքերում հիշատակվում է միայն դրական համատեքստում և որոնց վերագրվում են դրական բնութագրիչներ: Սա նկատելի է հույների և մասամբ էլ՝ որոշ այլ եվրոպական երկրների դեպքում:

Ամփոփելով եզրակացությունը կարող ենք ասել, որ այս անհանդուրժողականությունը եւ ոչ օբյեկտիվ մոտեցումները դասագրքերում նպաստում են որոշ ազգերի հանդեպ հայերի մոտ թշնամանքի սերնդեսերունդ փոխանցվելուն:

Հայոց պատմություն դասագրքերում ազգային հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումների վերլուծություն

Հայոց պատմություն առարկայի 9-րդ դասարանի դասագրքում ուսումնասիրվում է նորագույն շրջանը՝ 1918թ. մայիսյան հաղթանակներից մինչև մեր օրերը: Նկարագրվում են 1918-1920թթ. Հայաստանի տարածքում թուրք-թաթարական խռովությունների, ՀՀ-ում բնակվող մուսուլմանների միջոցով զանազան սադրանքների և լրտեսական գործողությունների մասին, որոնք վերջնականապես ճնշվում են 1920թ. ամռանը: Հաջորդիվ նկարագրված են Հայաստանի ներսում բոլշևիկյան մի շարք ապստամբությունների և դրանց ճնշման դեպքերի մասին, առանց պատճառահետևանքային և գաղափարական մանրամասների: Աշակերտը, կարդալով այս կամ այն ապստամբության մասին, չի կարող պատկերացում կազմել անգամ, թե ինչի՞ համար, ինչի՞ դեմ էին այդ ապստամբությունները և ինչու՞ դրանք ճնշվեցին, ինչու՞ համար այս կամ այն առաջնորդներն ու գաղափարակիրները կալանավորվեցին, աքսորվեցին կամ սպանվեցին:

Բազմաթիվ են այլախոհության, քաղաքական, գաղափարական տարաձայնությունների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորման օրինակները: «1920թ. Մայիսյան ապստամբությունն ավարտվեց պարտությամբ: Բոլշևիկյան կազմակերպությունները հայտարարվեցին օրենքից դուրս: Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ և մասնակիցներ, ներառյալ ապստամբների կողմն անցած սպաներ և այլ գործիչներ...»:

Հարևան պետությունների՝ Թուրքիայի, Վրաստանի և նորաստեղծ Ադրբեջանի հետ անհանդուրժողական փոխհարաբերությունների հիմնական պատճառը տարածքների նկատմամբ կողմերի պահանջատիրական վերաբերմունքն էր:

10-րդ դասարանի դասագրքում նշվում է՝ «Վանի տերությունը կարևոր դեր է խաղացել հայոց և համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ» ապա նշվում է. Ինչպիսին էլ որ լինի ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որը այնքան էական է քաղաքակրթության համար». այնուհետև մեջբերում է ռուս ասորագետ Նիկոլսկուց, որն ընդգծում է «ասորական վայրենի ոգու և ուրարտական ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև հակադրությունը»: Միաժամանակ, էջ 67-68-ում կարդում ենք այլ

հակասական հատվածներ, ըստ որոնց՝ Վանի թագավորության համար պատերազմը ստրուկներ ձեռք բերելու աղբյուր էր, երկու թագավորների օրոք ձեռք են բերվել մոտ կես միլիոն ռազմագերի ստրուկներ, որոնք երկրի հիմնական աշխատուժն էին:

Սոցիալական անհանդուրժողականության սերման օրինակ է 354թ. Ներսես Ա կաթողիկոսի կողմից կազմակերպված Հայոց եկեղեցու առաջին ժողովը, որի արդյունքում որոշվում է կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, աղքատանոցներ, իջևանատներ: Ժողովի սահմանած կանոնների համաձայն թագավորներին և մեծամեծներին պատվիրվում էր գթասիրտ լինել ծառաների և ստորադասների նկատմամբ, սիրել նրանց՝ որպես ընտանիքի անդամների, անօրեն կերպով և չափազանց մեծ հարկերով չնեղել հասարակ ժողովրդին: Ծառաներին էլ պատվիրում էր հնազանդ և հավատարիմ լինել տերերին:

Կրոնական անհանդուրժողականության օրինակ է պարսից արքայի դրածո բդեշխ Վազգենի կինը՝ Շուշանիկը, որը մերժում է Վազգենի կրոնափոխ լինելու բոլոր պահանջները և նահատակվում:

Հայոց եկեղեցու պատմության դասագրքերում ազգային հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումների վերլուծություն

Ի՞նչ հիմնավորմամբ է բարոյագիտության դասընթացը ներառված «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի մեջ, երբ էթիկան հանդես է գալիս որպես առանձին գիտական ուղղություն: Դասագրքում առաջադրվում են բարոյագիտական ուսուցման և դաստիարակության խնդիրներ, սակայն բարոյագիտական հասկացությունները ներկայացված են հիմնականում կրոնական դավանաբանության ու քարոզչության ձևաչափով:

Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դպրոցական դասագրքերում ամենից հաճախ հանդիպում են էթնոազգային, կրոնական, գենդերային ու սոցիալական հիմքերով պայմանավորված անհանդուրժողականության դրսևորումները: Հայտնաբերվածներից գերակշռում են էթնոազգային հիմքով պայմանավորված անհանդուրժողականության դրսևորումները: Մասնավորապես, եթե դասագրքերում հանդիպում ենք հայ ազգի եզակիության և վերջինիս գերադրական հատկանիշներով ներկայացվածությանը, ապա դրանից, որպես կանոն, բխում է նաև քրիստոնեության հայ առաքելական ուղղության՝ միակ ճշմարիտ ուղի լինելու, ինչպես նաև հայ կնոջ՝ ազգային ծագմամբ պայմանավորված պարկեշտության գաղափարը: Այս երևույթը հատկապես աչքի է ընկնում երկու նմանատիպ երևույթների համեմատության համատեքստում (հայ-օտարազգի, քրիստոնեություն-իսլամ և այլն):

Անհրաժեշտ է նկատել, որ ավագ դպրոցի հումանիտար հոսքի գրեթե բոլոր դասարանների դասագրքերում անհանդուրժողականություն հարուցող տարրերը

նմանատիպ են, ինչը, ըստ էության, բացատրվում է հասարակության մեջ վերջիններիս կարծրացած լինելու հանգամանքով:

Առաջարկություններ

1. Հանրակրթական հիմնական դպրոցի եւ ավագ դպրոցի առարկայական չափորոշիչում (1-9-րդ դասարաններ) բացակայում են ատելության խոսքի, այլատյացության եւ արմատականացման կանխարգելմանն ուղղված պահանջները:
2. Անհրաժեշտ է, որ դպրոցական դասագրքերը կազմելիս մարդու իրավունքների ոլորտի փորձագետները վերլուծեն դրանցում ատելություն, այլատյացություն, արմատականացում եւ անհանդուրժողականություն հարուցող տարրերի առկայությունը՝ այդպիսիք հետագայում բացառելու նպատակով:
3. Դասագրքերը պետք է հնարավորություն տան դպրոցականներին ինքնուրույն վերլուծելու և կարծիք հայտնելու համար:
4. Պետք է հաշվի առնել դասագրքերի դաստիարակող էությունը: Հանդուրժողականության, որպես արժեքի ձևավորման նպատակից ելնելով, ցանկալի է, որ թեմաները շարադրվեն այս կամ այն երևույթի հոգեբանական, արժեբանական, մշակութաբանական նշանակության և սոցիալական հանդուրժողականության վերաբերյալ պատկերացումների ձևավորման նկատառումներով: Իսկ հանդուրժողականություն եզրը պետք է կիրառվի ոչ թե մեկուսացված իր սուբյեկտներից՝ կոնկրետ երեւույթներից, այլ դրանց հետ համակցված:
5. Պետք է թուլացնել կրոնականի և ազգայինի նույնացման միտումը, որը կրոնական անհանդուրժողականության հիմնական գործոնն է: Միևնույն ժամանակ պետք է ուժեղացնել քաղաքացիական գիտակցության ձևավորման միտումը, որը թույլ է արտահայտված:
6. Կարելի է գրականության, պատմության թեմաների վերլուծության մեջ քննադատական մտածողության ձևավորումը ընդունել որպես նպատակ և, համապատասխանաբար, բազմակողմանի հարցադրումներ անել:
7. Հայ գրականություն առարկայի դասագրքերում որոշակի բովանդակային փոփոխություններ կատարելու նպատակով՝ նոր հետազոտության իրականացում
8. Անհրաժեշտություն կա նոր առարկաների՝ Արտասահմանյան գրականության եւ Քննադատական մտածողության ներմուծման, որոնք կլրացնեն ներկայիս առարկայի բացերը:

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն

Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները: